



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ ԸԻԴ N 0147/05/13թ.
Նախագահող դատավոր՝ Լ.Ավանեսյան
Դատավորներ՝ Հ.Գրիգորյան
Կ.Սաղյան

Վարչական գործ ԸԻԴ N 0147/05/13թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ

3 հուլիսի 2014թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝
վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Վ.Հովսեփյանի
դատավորներ՝ Գ.Արզումանյանի
Ա.Հայրապետյանի

քննելով ըստ հայցի Լիանա Եղիշեի Ֆարսյանի և Ռազմիկ Կարոյի Աղասյանի
ընդդեմ «ԲԼԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության,
Ստեփանակերտի քաղաքապետարանի, ԼՂՀ արդարադատության
նախարարության Ստեփանակերտի նոտարական տարածքի թիվ 1 նոտարական
գրասենյակի պետնոտար Ն.Գրիգորյանի և ԼՂՀ կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ Ստեփանակերտի քաղաքապետի
2004 թվականի հունիսի 29-ի հմ 508 որոշումը, Ստեփանակերտի քաղաքապետի և
«ԲԼԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի միջև
2004 թվականի հունիսի 30-ին կնքված հողամասի վարձակալության պայմանագիրը,
2004 թվականի օգոստոսի 2-ին ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի
կադաստրի պետական կոմիտեում «ԲԼԱՐԳ» սահմանափակ պատասխա-
նատվությամբ ընկերության վարձակալության իրավունքի պետական գրանցումը,
Ստեփանակերտի քաղաքապետի 2008 թվականի դեկտեմբերի 22-ի հմ 1108 Ա
որոշումը, Ստեփանակերտի քաղաքապետի և «ԲԼԱՐԳ» սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերության միջև 2008 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված հողամասի առուվաճառքի պայմանագիրը, 2009 թվականի փետրվարի 2-ին ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 3-3 մատյանի 013574 համարի տակ կատարված իրավունքների պետական գրանցումը մասնակի՝ հողամասի հատակագծի 8-9-10-11-12-13 հատվածների մասով, անվավեր ճանաչելու պահանջների մասին վարչական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 8-ի որոշման դեմ պատասխանող «ԲԼԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արտավազ Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

2013 թվականի հունիսի 4-ին Լիանա Եղիշեի Ֆարսյանը և Ռազմիկ Կարոյի Աղասյանը վարչական դատավարության կարգով համատեղ հայց են հարուցել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի /վարչական/ դատարան /այսուհետ՝ նաև Դատարան/՝ Ստեփանակերտի քաղաքապետի 2004 թվականի հունիսի 29-ի հմ 508 որոշումը, դրա հիման վրա Ստեփանակերտի քաղաքապետի և «Բլարգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի միջև 2004 թվականի հունիսի 30-ին կնքված հողամասի վարձակալության թիվ 106 պայմանագիրը, 2004 թվականի օգոստոսի 2-ին ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում /այսուհետ՝ նաև Կադաստր/ կատարված «Բլարգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վարձակալության իրավունքի պետական գրանցումը, Ստեփանակերտի քաղաքապետի 2008 թվականի դեկտեմբերի 22-ի հմ 1108 Ա որոշումը, դրա հիման վրա Ստեփանակերտի քաղաքապետի և «Բլարգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2008 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված հողամասի առուվաճառքի պայմանագիրը և 2009 թվականի փետրվարի 2-ին ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 3-3 մատյանի 013574 համարի տակ կատարված իրավունքների պետական գրանցումը մասնակի՝ հողամասի հատակագծի 8-9-10-11-12-13 հատվածների մասով, անվավեր ճանաչելու պահանջներով:

2013 թվականի հունիսի 10-ին Դատարանի որոշմամբ Լ. Ֆարսյանի և Ռ. Աղասյանի ներկայացուցիչ Ա.Թարխանյանի միջնորդությունը՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին, մերժվել է: Նույն որոշմամբ մերժվել է նաև հայցադիմումի ընդունումը: Նշված որոշումը 2013 թվականի հուլիսի 1-ին ԼՂՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ վերացրել է:

Դատարանի 2014 թվականի փետրվարի 6-ի վճռով Լ.Ֆարսյանի և Ռ. Աղասյանի հայցը մերժվել է:

Նշված վճռի դեմ 2014 թվականի մարտի 6-ին վերաքննիչ բողոք են բերել Ռ.Աղասյանը և Լ.Ֆարսյանի ներկայացուցիչ Ա. Թարխանյանը: Ռ.Աղասյանը խնդրել է բեկանել վճիռը և գործն ուղարկել նոր քննության այն հիմքով, որ Դատարանն իրեն պատշաճ կարգով չի ծանուցել դատական նիստերի ժամանակի և վայրի մասին, որի պատճառով ինքը զրկվել է դատական պաշտպանության իրավունքից, իսկ Ա. Թարխանյանը խնդրել է բեկանել Դատարանի վճիռը և հայցը բավարարել:

Վերաքննիչ դատարանը /դատավորների մեծամասնությամբ/ 2014 թվականի մայիսի 8-ին Ռ.Աղասյանի վերաքննիչ բողոքը մերժել է, իսկ Լ.Ֆարսյանի ներկայացուցիչ Ա.Թարխանյանի վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն. Դատարանի 2014 թվականի փետրվարի 6-ի վճիռը բեկանվել և գործն ուղարկվել է նույն դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել «ԲԼԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ա.Սարգսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վերաքննիչ դատարանը չի կիրառել կիրառման ենթակա ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը, խախտել է նույն օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասը, 23-րդ հոդվածի 2-րդ մասը, 24-րդ հոդվածը, 25-րդ հոդվածի 1-ին մասը, 26-րդ հոդվածի 2-րդ մասը: Վերաքննիչ դատարանը չի կիրառել նաև կիրառման ենթակա ԼՂՀ հողային օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ կետերը, 7-րդ հոդվածի 1-ին մասը և 6-րդ մասի 2-րդ պարբերությունը, 10-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, 3-րդ և 7-րդ մասերը, սխալ է կիրառել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ԼՂՀ օրենքի 12-րդ հոդվածը, 14-րդ հոդվածի 1-ին մասը, սխալ է մեկնաբանել ԼՂՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ հայցվորները բոլորովին չեն հիմնավորել գործով իրենց իրավաբանական շահագրգռվածության առկայությունը, ինչը նրանք պարտավոր էին անել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի ուժով: Անգամ հայցադիմումին չեն կցել իրենց տարածքների սեփականության իրավունքի գրանցման վկայականների պատճենները, որի պարտականությունը ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի և 26-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով կրում են հենց հայցվորներն իրենք:

Անտեսվել է նաև այն փաստը, որ հայցվորներն ունեն իրենց տարածքներն անարգել մուտք գործելու ճանապարհ՝ Կարկառ գետի ափով, որը նրանց կողմից

ցանկության դեպքում միշտ օգտագործվել և օգտագործվում է: Այն հանգամանքը, որ ընկերությունը, որպես բարի կամքի դրսևորում, չի ցանկապատել իրեն պատկանող վիճելի տարածքը /հողաշերտը/՝ հայցվորներին թույլ տալով այն օգտագործել որպես իրենց տարածքները մուտք գործելու երկրորդ ուղի, տվյալ դեպքում ոչ մի իրավական նշանակություն չունի: «ԲԼԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հատկացված վիճելի հողամասը սահմանված կարգով երբևէ ճանապարհ չի համարվել ու չի կարող այդպիսին համարվել, մանավանդ որ բոլորովին չի համապատասխանում ճանապարհների շինարարական նորմերի պահանջներին: Վիճարկվող ակտերով հայցվորների իրավունքները չեն խախտվել:

Վերաքննիչ դատարանը, սակայն, անտեսելով վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող վերոնշված փաստերը, եզրահանգել է, որ «պարզված չէ վեճի առարկա հողամասը, ԼՂՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ուժով, քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող հող լինել-չլինելու և, դրանով պայմանավորված, վիճարկվող վարչական ակտերի իրավաչափության հարցերը»: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով դատական նիստում Կադաստրի ներկայացուցչի ցուցմունքը, բողոքարկվող որոշման մեջ նաև նշել է, որ «Ստեփանակերտ քաղաքի գլխավոր հատակագիծ գոյություն չունենալու և վիճարկվող հողամասը ԼՂՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հող չլինելու մասին վերաբերելի և թույլատրելի ապացույց Ստեփանակերտի քաղաքապետարանի կողմից չներկայացվելու պայմաններում, ելնելով գործի ճիշտ լուծման անհրաժեշտությունից, վիճարկվող տարածքի նպատակային նշանակության հարցը պետք է լուծվի բոլոր հնարավոր ապացույցների հավաքման, այդ թվում նաև համապատասխան փորձաքննության նշանակման և գնահատման արդյունքում»:

Մինչդեռ ո՛չ փորձագետին, ո՛չ կադաստրի ներկայացուցչին, ո՛չ էլ մեկ այլ սուբյեկտի օրենսդիրը չի օժտել հողամասը ճանապարհ ճանաչելու իրավասությամբ՝ նշված լիազորությունը բառացառապես վերապահելով տեղական ինքնակառավարման մարմնին, Ստեփանակերտ քաղաքի դեպքում՝ նաև ԼՂՀ կառավարությանը, հողամասի՝ ընդհանուր օգտագործման հողերի ցանկի մեջ ընդգրկված լինելու մասին վկայող թույլատրելի ապացույցը ԼՂՀ հողային օրենսգիրքը դիտարկում է միայն հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաները և բնակավայրերի գլխավոր հատակագծերը: Վերաքննիչ դատարանի բոլոր պատճառաբանություններն անընդունելի են: Վիճարկվող ակտերն իրավաչափ են. օրենքի խախտում թույլ չի տրվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 8-ի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 2014 թվականի փետրվարի 6-ի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1/ 2004 թվականի հունիսի 29-ին Ստեփանակերտի քաղաքապետի թիվ 508 որոշմամբ «ԲԼԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վարձակալության է հատկացվել Ստեփանակերտի Նաբերեժնայա փողոցի շրջակայքում ընկերությանը պատկանող շինությանը հարակից 7466 քմ մակերեսով հողատարածքը, այդ թվում՝ վեճի առարկա տարածքը: Այդ որոշման հիման վրա 2004 թվականի հունիսի 30-ին Ստեփանակերտի քաղաքապետարանի և «ԲԼԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքվել է հողատարածքի վարձակալության պայմանագիր, որից բխող իրավունքները Կադաստրում գրանցվել են 2004 թվականի օգոստոսի 2-ին: Ստեփանակերտի քաղաքապետի 2008 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1108-Ա որոշմամբ ընկերությանը պատկանող շինություններին հարակից փաստացի 7311 քմ մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով օտարվել է ընկերությանը: Ստեփանակերտի քաղաքապետարանի և «ԲԼԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 27.12.2008թ. կնքվել է հողամասի առուվաճառքի թիվ 102 պայմանագիրը: 2009 թվականի փետրվարի 2-ին Կադաստրում գրանցվել է ընկերության սեփականության իրավունքը նշված հողամասի նկատմամբ՝ «արդյունաբերական, ընդերքօգտագործման և արտադրական» նպատակային և «արդյունաբերական օբյեկտների հող» գործառնական նշանակությամբ:

2/ Ստեփանակերտի Նաբերեժնայա 3-րդ նրբանցքի թիվ 10ա հասցեում գտնվող ամառանոցին կից 0,1200 հա «բնակավայրերի հողեր» նպատակային նշանակության հողամասի նկատմամբ 2005 թվականի դեկտեմբերի 9-ին գրանցվել է Ռ.Ադասյանի վարձակալության, 2010 թվականի ապրիլի 6-ին՝ սեփականության իրավունքը, իսկ Ստեփանակերտի Նաբերեժնայա 3-րդ նրբանցքի թիվ 10/1 հասցեում գտնվող 0,0593 հա նույն նպատակային նշանակության հողամասի նկատմամբ 2011 թվականի նոյեմբերի 16-ին գրանցվել է Լ.Ֆարսյանի սեփականության իրավունքը:

3/ Հայցվորները հայցը հիմնավորել են նրանով, որ վիճարկվող որոշումների ու դրանց հիման վրա կնքված պայմանագրերի ու կատարված պետական գրանցումների արդյունքում «ԲԼԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականությանն է անցել նաև դեպի հարևանությամբ տեղակայված իրենց հողամասերը տանող ճանապարհը, ինչը հակասում է ԼՂՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին, համաձայն որի՝ արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողեր, այդ թվում՝ ճանապարհներ են, ինչի հետևանքով խախտվել է իրենց սեփականության իրավունքը, այն է՝ գրկվել են իրենց հողամասերը մուտք գործելու միակ ճանապարհից:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.14-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկության կարգով գործի քննության ժամանակ Գերագույն դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Քննելով վճռաբեկ բողոքը նշված սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Վարչական դատարան դիմելու իրավունքը» վերտառությամբ 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ այդ օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները ...: Նույն օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը:

Վերոնշված իրավակարգավորումներից հետևում է, որ օրենսդիրը կոնկրետ դեպքում դատարանին պարտավորեցնում է հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում ուսումնասիրելու և գնահատելու նաև այն հարցը, թե հայցադիմում ներկայացրած անձը դրա իրավունքն ակնհայտորեն ունի՞ թե ոչ, այսինքն՝ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի իմաստով համարվու՞մ է շահագրգիռ անձ, թե ոչ: Եվ եթե հայցադիմում ներկայացնելու իրավունք չունենալը կոնկրետ դեպքում ակնհայտ է, ապա դատարանի պարտականությունն է մերժել հայցադիմումի ընդունումը: Իսկ եթե հայցադիմումը վարույթ ընդունելիս ակնհայտությունն առկա չէ ու գործի քննության արդյունքում է միայն պարզվում, որ դատարան դիմած անձի իրավունքները չեն խախտվել կամ անմիջականորեն չեն կարող խախտվել, ապա դա, ըստ գործող իրավակարգավորումների, հայցը մերժելու հիմք է հանդիսանում:

Ուստի սույն գործով առաջին հերթին անհրաժեշտ է պարզել հայցվորների՝ շահագրգիռ անձ լինելու կամ չլինելու հարցը:

Ըստ սույն գործում, ինչպես նաև գործին կից ուղարկված կադաստրային գործերում առկա փաստերի՝ 2004 թվականի հունիսի 29-ին Ստեփանակերտի քաղաքապետի թիվ 508 որոշմամբ «ԲԼԱԲԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վարձակալության է հատկացվել Ստեփանակերտի Նաբերեժնայա փողոցի շրջակայքում ընկերությանը պատկանող շինությանը հարակից 7466 քմ մակերեսով հողատարածքը, այդ թվում՝ վեճի

առարկա տարածքը: Այդ հողատարածքի նկատմամբ 2004 թվականի հունիսի 30-ին Ստեփանակերտի քաղաքապետարանի և «ԲԼԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքվել է վարձակալության պայմանագիրը, որից բխող իրավունքները Կադաստրում գրանցվել են 2004 թվականի օգոստոսի 2-ին: Ստեփանակերտի քաղաքապետի 2008 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1108-Ս որոշմամբ ընկերությանը պատկանող շինություններին հարակից փաստացի 7311 քմ մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով օտարվել է ընկերությանը: Ստեփանակերտի քաղաքապետարանի և «ԲԼԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 27.12.2008թ. կնքվել է հողամասի առուվաճառքի թիվ 102 պայմանագիրը: 2009 թվականի փետրվարի 2-ին Կադաստրում գրանցվել է ընկերության սեփականության իրավունքը նշված հողամասի նկատմամբ՝ «արդյունաբերական, ընդերքօգտագործման և արտադրական» նպատակային և «արդյունաբերական օբյեկտների հող» գործառնական նշանակությամբ:

Ստեփանակերտի Նաբերեժնայա 3-րդ նրբանցքի թիվ 10ա հասցեում գտնվող ամառանոցին կից 0,1200 հա «բնակավայրերի հողեր» նպատակային նշանակության հողամասի նկատմամբ 2005 թվականի դեկտեմբերի 9-ին գրանցվել է Ռ.Ադայանի վարձակալության, 2010 թվականի ապրիլի 6-ին՝ սեփականության իրավունքը, իսկ Ստեփանակերտի Նաբերեժնայա 3-րդ նրբանցքի թիվ 10/1 հասցեում գտնվող 0,0593 հա նույն նպատակային նշանակության հողամասի նկատմամբ 2011 թվականի նոյեմբերի 16-ին գրանցվել է Լ.Ֆարսյանի սեփականության իրավունքը:

Այսինքն՝ հողամասերը /«բնակավայրերի հողեր» նպատակային նշանակության/ հայցվորներին հատկացվել են ավելի ուշ, քան գրանցվել են հողամասի, այդ թվում՝ վիճելի հողամասի /«արդյունաբերական, ընդերքօգտագործման և արտադրական» նպատակային նշանակության/ նկատմամբ «ԲԼԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականության իրավունքները. այդ իրավունքները ճանաչված, երաշխավորված և պաշտպանված են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ հոդվածի ուժով: Վիճարկվող ակտերով հայցվորների իրավունքները, այն էլ՝ օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված, չեն խախտվել: Ավելին՝ նրանք ապահովված են Կարկառ գետի ափով իրենց տարածքներն անարգել մուտք գործելու հնարավորությամբ, ինչը հետևում է նաև գործում առկա ԼՂՀ Գերագույն դատարանի վերաքննիչ ատյանի 2007 թվականի մայիսի 18-ի վճռից, որով մերժվել է Հրանտ Գրիգորյանի հայցապահանջն ընդդեմ «ԲԼԱՐԳ» սահմանափակ պատասխանատվության ընկերության՝ «նախկինում որպես ճանապարհ օգտագործված տարածքը նորից որպես ճանապարհ հատկացնելու մասին»:

Մինչդեռ, սույն գործով հայցվորները հայցը հիմնավորել են նրանով, որ վիճարկվող որոշումների ու դրանց հիման վրա կնքված պայմանագրերի ու կատարված պետական գրանցումների արդյունքում «ԲԼԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականությանն է անցել նաև դեպի հարևանությամբ տեղակայված իրենց հողամասերը տանող և իրենց կողմից

փաստացի օգտագործվող միակ ճանապարհը, ինչը, հայցվորների կարծիքով, հակասում է ԼՂՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին, համաձայն որի՝ արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողեր, այդ թվում՝ ճանապարհներ են, ինչի հետևանքով խախտվել է իրենց սեփականության իրավունքը, այն է՝ զրկվել են իրենց հողամասերը մուտք գործելու միակ ճանապարհից:

Փաստորեն նույն պատճառաբանությունները նշվել են նաև վերաքննիչ բողոքում, իսկ Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշման հիմքում դրել է միայն հայցվոր կողմի փաստարկները՝ անտեսելով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը:

Այսպիսով, հիմնավոր է վճռաբեկ բողոքի հիմքն այն մասին, որ հայցվորները սույն գործով չեն հանդիսանում շահագրգիռ անձինք. վիճարկվող ակտերով հայցվորների իրավունքները, այն էլ՝ օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված, չեն խախտվել:

Գերագույն դատարանը, գտնելով, որ վերոնշյալ հիմքը միանգամայն բավարար է սույն գործով ներկայացված հայցն անհիմն համարելու ու Վերաքննիչ դատարանի որոշումը, ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի ուժով բեկանելու համար, այնուամենայնիվ, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու և իրավունքի զարգացմանը նպաստելու իր սահմանադրաիրավական գործառնությունից ելնելով, հարկ է համարում նաև անդրադառնալու վիճարկվող վարչական ակտերի իրավաչափության հարցի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշման մյուս պատճառաբանություններին:

Այսպես, Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշման մեջ նաև նշել է, որ «... Վարչական դատարանը միջոցներ չի ձեռնարկել վիճելի տարածքը ԼՂՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հող լինել-չլինելու, և դրանով պայմանավորված, վարչական ակտերի իրավաչափության հարցերը պարզելու համար: Եվ հայցը մերժել է առանց քննարկելու ենթադրյալ հիմնական ճանապարհը քաղաքապետարանի կողմից այլ անձի սեփականաշնորհված լինելու և վիճելի տարածքն իրենց միակ ճանապարհը հանդիսանալու մասին հայցվորների փաստարկներն ու դրանով պայմանավորված՝ վիճարկվող վարչական ակտերով սեփականության իրավունքով նրանց պատկանող տարածքներ մուտք գործելու նրանց իրավունքների խախտման առկայությունը» և որ «Ստեփանակերտ քաղաքի գլխավոր հատակագիծ գոյություն չունենալու և վիճարկվող հողամասը ԼՂՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հող չլինելու մասին վերաբերելի և թույլատրելի ապացույց Ստեփանակերտի քաղաքապետարանի կողմից չներկայացվելու պայմաններում, ելնելով գործի ճիշտ լուծման անհրաժեշտությունից, վիճարկվող տարածքի նպատակային նշանակության հարցը պետք է լուծվի բոլոր հնարավոր ապացույցների հավաքման, այդ թվում նաև համապատասխան

փորձաքննության նշանակման և գնահատման արդյունքում»: Վերաքննիչ դատարանը նաև եզրահանգել է, որ «Դատարանն անտեսել է Կադաստրի ներկայացուցիչ Ջարինե Ավագյանի պնդումն այն մասին, որ վիճարկվող տարածքը հանդիսանում է ճանապարհ, քանի որ ճանապարհը ոչ միայն անցման համար նախատեսված ընդհանուր ճանապարհ է, այլև տարածք, որով մուտք են գործում մի քանի օբյեկտներ»:

ԼՂՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք բնակավայրերում ընդհանուր օգտագործման հողեր են /հրապարակներ, փողոցներ, ճանապարհներ, գետափեր, զբոսայգիներ, պուրակներ, այգիներ, լողափեր և ընդհանուր օգտագործման այլ տարածքներ/:

ԼՂՀ հողային օրենսգրքի նշված հոդվածից ու նրա հետ փոխկապակցված մյուս նորմերից հետևում է, որ ընդհանուր օգտագործման տարածքներն այն տարածքներն են, որոնցից անարգել օգտվում է անձանց անսահմանափակ շրջանակ: Ընդ որում, ճանապարհը, ըստ նպատակային նշանակության, հանդիսանում է բնակավայրերի հող, ըստ գործառնական նշանակության՝ ընդհանուր օգտագործման հողատեսք, իսկ այդ բնագավառում իրավահարաբերությունները կարգավորվում են ինչպես պետական մակարդակով, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների նորմերով: Մինչդեռ, գործի փաստերով հաստատված է, որ վիճելի հողամասից օգտվում են միայն հացվորներն ու պատասխանող ընկերությունը, այլ անձինք ընդհանրապես մուտք չունեն /փակված է դարպասով/, իսկ վեճի առարկա տարածքը սահմանված կարգով ճանաչված է ոչ թե ընդհանուր օգտագործման, այլ արդյունաբերական, ընդերքօգտագործման և արտադրական նպատակային նշանակության տարածք:

Նման հանգամանքներում հիմնավոր է վճռաբեկ բողոքի հիմքն այն մասին, որ բողոքարկվող որոշումը կայացվել է նաև օրենքի՝ մասնավորապես ԼՂՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սխալ մեկնաբանման արդյունքում:

Այսպիսով, տվյալ դեպքում Դատարանն ըստ էության ճիշտ է լուծել վեճը: Հետևաբար՝ անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Գերագույն դատարանի լիազորությունը՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի

գործին մասնակցող անձանց համար, իսկ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի ու Սահմանադրության վերոնշյալ հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքնության իրավունքի տարր: Հետևաբար՝ գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Գերագույն դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի /վարչական/ դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Գերագույն դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է ... մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի ծախսերը, որն իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին: Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը մի քանի հայցվորների, բողոք բերողների կամ պատասխանողների միջև բաշխվում են հավասարաչափ, կամ յուրաքանչյուրը կրում է իր գործողություններով առաջացած ծախսերի մասնաբաժինը: Սույն գործով դատական ծախսերը բաղկացած են պետական տուրքի գումարներից, որոնք մուծվել են հայցվորների կողմից՝ հայցադիմումի ու վերաքննիչ բողոքների համար, իսկ պատասխանող «ԲԼԱԲԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից՝ վճարել բողոքի համար: Գերագույն դատարանը գտնում է, որ հայցը մերժելու արդյունքում Դատարանը հայցադիմումի համար մուծված պետական տուրքի հարցը ճիշտ է համարել լուծված, իսկ վճարել բողոքի համար մուծված պետական տուրքի գումարը ենթակա է բռնագանձման հայցվորներից՝ հոգուտ «ԲԼԱԲԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15- 118.18-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարել բողոքը բավարարել: Բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 8-ի որոշումը և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի /վարչական/ դատարանի 2014 թվականի փետրվարի 6-ի վճռին:

2. Լիանա Եղիշեի Ֆարսյանից և Ռազմիկ Կարոյի Աղապյանից հոգուտ «ԲԼԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂՁ

Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Գ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ